ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ապրիլի 2021 թվականի N 13

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **09.04.2021**Թ. ԹԻՎ **4** ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը՝

1. Արարատի մարզպետարանից ստացված N 01//03189-2021 գրության քննարկում:
2. Այգեստան համայնքի 2021 թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքի տնօրինման մասին:
4. Այգեստան համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխության կատարում:
5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Այգեստան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) հաստատելու մասին:
6. Այգեստանի մանկապարտեզը վերանվանելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ապրիլի 2021 թվականի N 14

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ N 01//03189-2021 ԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Արարատի մարզպետի 02.04.2021թ. N 01//03189-2021 գրությունը Այգեստան համայնքի ավագանու 10.03.2021թ. թիվ 9-ից 12 որոշումները <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու մասին, ավագանին որոշում է

Ուժը կորցրած ճանաչել Այգեստան համայնքի ավագանու 10.03.2021թ

թիվ 9՝ Այգեստան համայնքի ավագանու 10.03.2021թ. թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին,

թիվ 10՝ Այգեստան համայնքի ավագանու 15.05.2020թ. թիվ 15 որոշման մեջ լրացում կատարելու մասին,

թիվ 11՝ Այգեստան համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին,

թիվ 12՝ Գույքահարկի արտոնություն տալու մասին որոշումները:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՍԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ
ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 15

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով Այգեստան համայնքի ավագանին որոշում է.

Ի գիտություն ընդունել Այգեստան համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը .

Հողի հարկ՝ 6.77 %
Գույքահարկ՝ 44,3 %
Հողի վարձակալություն 28,2 %
Գույքի վարձակալություն 27 %
Տեղական տուրք՝ 0
Ծնողական վճար՝ 12,8 %

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ. գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 16

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ սեփական նախաձեռնությամբ ընդունել որոշում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքը (հողամասը և շինությունները) օտարելու վերաբերյալ՝ նախապատվություն տալով կառույցն իրականացրած անձին:

2. Շինությունների նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ վճարները իրականացվում են շինությունները գնողի կողմից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ. գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 17

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. ֆ/բ 04.03.02.55 /միջուկային վառելիք/ ծրագրի 5112 հոդվածից պակասեցնել 1185,450 հազ.դրամ, 550,0 հազ.դրամ ավելացնել 09.06.01.51 /նախադպրոցական հաստատությունների հինանորոգում/ ծրագրի 5134 հոդվածին, 120,0 հազ.դրամ նույն ծրագրի 5133 հոդվածին, 280,0 հազ.դրամ 01.01.01.51 /կառ. մարմնի պահպ./ ծրագրի 5129 հոդվածին, 60,0 հազ.դրամ 08.02.04.51 /մշ. միջ. իրականաց./ ծրագրի 5132 հոդվածին:

2. 09.01.01.52 /նախադպրոցական ուսուցման կազմակերպում/ ծրագրի 5122 հոդվածից պակասեցնել 390,0 հազ.դրամ և ավելացնել նույն ծրագրի 5129 հոդվածին:

3. 09.01.01.52 /նախադպ. ուսուցման կազմակերպ./ ծրագրի 5122 հոդվածից 261,0 հազ.դրամ և 04.03.02.55 /միջուկ. վառելիք/ ծրագրի 5112 հոդվածից 189,0 հազ.դրամ պակասեցնել և 450,0 հազ.դրամ ավելացնել 05.01.01.51 /աղբահանություն և սանիտ. մաքրում/ ծրագրի 5129 հոդվածին:

4. վ/բ 11.01.02.51 /վ/բ պ/ֆ/ ծրագրի 4891 հոդվածից պակասեցնել 640,0 հազ.դրամ և ավելացնել 01.01.01.51 /կառ. մարմնի պահպ./ ծրագրի 4221 հոդվածին՝ 30,0 հազ.դրամ, 4232 հոդվածին՝ 120,0 հազ.դրամ, 4234 հոդվածին՝ 200,0 հազ.դրամ, 4241 հոդվածին՝ 90,0 հազ.դրամ, 4261 հոդվածին՝ 200,0 հազ.դրամ:

5. վ/բ 11.01.02.51 /վ.բ. պ.ֆ./ 4891 հոդվածից պակասեցնել 1265,0 հազ.դրամ, ավելացնել՝ 625,0 հազ.դրամ 04.02.04 ծրագրի /ոռոգման ցանցի կառուցում/ 4239 հոդվածի, 410,0 հազ. դրամ 09.01.01.52 /նախադպ. Ուսուցման կազմակերպում/ ծրագրի 4239 հոդվածին՝ 180,0 հազ.դրամ, 01.01.01.51 /կառ.մարմնի պահպ./ ծրագրի 4269 հոդվածին, 47,0 հազ.դրամ՝ 09.01.01.51 /նախադպ. Ուսուցում/ ծրագրի 4263 հոդվածին 3,0 հազ.դրամ 01.01.01.51 /կառ. մարմնի պահպ./ ծրագրի 4823 հոդվածին:

6. ֆ.բ 04.02.04 /ոռոգման ցանցի կառուցում/ ծրագրի 5112 հոդվածից 500,0 հազ. դրամ, 04.05.01.58 /մայրուղիների և փողոցների վերակառուցում/ ծրագրի 5112 հոդվածից 15,0 հազ.դրամ պակասեցնել և ավելացնել՝ 102,6 հազ.դրամ 06.04.01.52 /արտաքին լուսավ. ցանցի շահագործ./ ծրագրի 5112 հոդվածին, 300,0 հազ.դրամ՝ 05.06.01.53 /հասարակ. զուգ. պահպ./ ծրագրի 5129 հոդվածին, 75,0 հազ.դրամ՝ 09.01.01.52 /նախադպ. ուսուցման կազմակերպում/ ծրագրի 5129 հոդվածին և 37,4 հազ.դրամ՝ 09.06.01.51 /նախադպ.հաստատութ.հիմնանորոգում/ ծրագրի 5112 հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ. Արարատի մարզ. գ.Այգեստան, 023560041, araratay gestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Այգեստան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի <<Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)>> գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան /աղյուսակը կցվում է/:

3. Ճյուղային համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Չեղյալ ճանաչել Այգեստան համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 16 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Այգեստան համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունն
փոփոխությունները

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը /հա/	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակեր /հա
1	2	3	4	5
	Առաջնահերթ միջոցառումներ /1-5 տարի/			
	Բնակավայրի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-I	հասարակական կառուցապատման	0.07	Բնակելի կառուցապատման /անհատական կառուցապատման/	0.07
ԲԲ-II	հասարակական կառուցապատման	0.14	Խառը կառուցապատման	0.14
	Ընդհանուր	0.21		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից			
			Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի	
ԳԱ-I	Վարելահող	1.6	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	1.6
	Ընդհանուր	1.6		
	Միջնաժամկետ միջոցառումներ /5-10 տարի/			
	Գյուղատնտեսական նշանակության հողեր			
			Բնակավայրերի	
ԳԲ-I	Վարելահող	1.41	Հասարակական կառուցապատման	1.41
ԳԲ-II	Վարելահող	0.52	Ընդհանուր օգտագործման	0.52
ԳԲ-III	Վարելահող	1.85	Բնակելի կառուցապատման /անհատական կառուցապատման/	1.85
ԳԲ-IV	Վարելահող	0.95	Բնակելի կառուցապատման /անհատական կառուցապատման/	0.95
ԳԲ-V	Վարելահող	1.01	Բնակելի կառուցապատման /անհատական կառուցապատման/	1.01
ԳԲ-VI	Վարելահող	0.82	Բնակելի կառուցապատման /անհատական կառուցապատման/	0.82
	Ընդհանուր	6.56		
	Հեռանկարային միջոցառումներ /10-15 տարի/			
	Գյուղատնտեսական նշանակության հողերից			
ԳԱ-I	Վարելահող	2.9	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	2.9
	Ընդհանուր	2.9		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների	
ԳԱ-I	Վարելահող	0.23	Կոմունալ օբյեկտների /գերեզմանոց/	0.23
	Ընդհանուր	0.23		

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
22 Արարատի մարզ, գ. Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ապրիլի 2021 թվականի N 19

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՅԳԵՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Այգեստան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնքի «Այգեստանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնքի «Հասմիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ ի պատիվ համագյուղացի երկարամյա մանկավարժ Հասմիկ Մելքոնյանի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ